
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ.
ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
(Հին շրջանից մինչև 1918 թ.)

ԱՇՈՏ ԽԱՉՍՏՐՅԱՆ

Պատմական և ժամանակակից պետության անբաժան ու էական հատկանիշներից է հարկերի գոյությունը: Պետության ծագման պահից հարկերը համարվել են հասարակության մեջ տնտեսական հարաբերությունների կարևորագույն օղակ: Եվ դրանք միշտ դիտվել են որպես պետական գանձարանի համալրման հիմնական աղբյուր, որոնց պատմությունը հաշվարկվում է հազարամյակներով: Վաղ անցյալից հարկերը ծառայել են իբրև մարդկության քաղաքակրթության հասարակական առաջին պահանջմունքների բավարարման միջոց և գործադրվել են պետական ապարատի պահպանման ու պետության այլ գործառնությունների իրագործման համար:

Հայաստանում հարկերի ու հարկային համակարգի ձևավորումն ընթացել է հայ ժողովրդի կազմավորման ու զարգացման երկարատև գործընթացի հետ:

Հարկի հասկացության և դրա իրավաբանական բնույթի բացահայտման համար կարևոր է հարցի հայկական ծագումնաբանության լուսաբանումը: Այսպես՝ «հարկ» բառացի նշանակում է «հնազանդեցնել, ծառայության բերել»¹: Դրա գործածության մասին հիշատակվել է ինչպես «Մակարայեցուց» գրքում, այնպես էլ հրեական Թալմուդի տվյալների մեջ (մ. թ. I դար): Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ «հարկ» բառը նշվել է որպես ընդհանուր նշանակության հասկացություն:

Ի դեպ, հայ մատենագրության մեջ հայտնի է այն տեսակետը, որ «հարկ» բառի ծագմանը մոտ են մ. թ. I դարում Բրաքում գործածված «քարզան» (գլխահարկ) և «տասկան» (հողահարկ) հասկացությունները, որոնց բովանդակային իմաստը համապատասխանում էր նաև իրանական «խարազ», արաբական «խարաջ», վրացական «խարկի» բառերին²: Նկատենք, որ տվյալ ժամանակաշրջանում հարկմանն առնչվող երևույթները և հարևան երկրներում իրականացվող գործընթացները պետք է որ գոյություն ունենային Հայաստանում նս:

Հարկային համակարգի ձևավորման գործընթացը Հայաստանում պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի. ա) հարկերի ծագման վաղ ժամանակաշրջանը (մ. թ. ա. IX դ. – մ. թ. II դ.), բ) հարկային համակարգը ավատական (ֆեոդալական) հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանը:

¹ Տե՛ս ն. Ա դ ո ն և ց. Հայ հին շինականությունը.– Պատմագիտական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 54:

² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1972, էջ 801-802:

նում (III–IX դդ.), գ) հարկային քաղաքականությունը Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում (IX–XI դդ.), դ) հարկերն ու հարկահանման ձևերը օտարերկրյա տիրապետության ժամանակաշրջանում (XI դ. – XIX դարասկիզբ), ե) հարկման գործընթացի վիճակն ու զարգացումը Երևանի նահանգում և Արևմտյան Հայաստանում (XIX դ. – XX դարասկիզբ), զ) Հայաստանի առաջին հանրապետության հարկային համակարգը, է) հարկային համակարգի ձևավորումն ու զարգացումը խորհրդային տարիներին (1920–1991 թթ.), զ) Հայաստանի երրորդ հանրապետության հարկային համակարգը (1991 թվականից մինչև մեր օրերը):

Հարկերի ծագման վաղ ժամանակաշրջանը (մ. թ. ա. IX դ. – մ. թ. II դ.)

Հին Արևելքի համար բնորոշ հարկային հարաբերությունները գոյություն են ունեցել նաև Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսից, որտեղ ապրել են Նաիրի անունով մի շարք ցեղային միություններ³: Սկզբնական շրջանում հարկերը գոյություն են ունեցել ոչ համակարգված վճարումների ձևով՝ հիմնականում կրելով բնամթերային տեսք: Եվ քանի որ մինչև մ. թ. IV դարը մեր երկրում հարկերի մասին գրավոր տեղեկություններ չեն պահպանվել, ուստի հնագույն շրջանի հետազոտվող ոլորտին առնչվող տեղեկությունները խիստ աղքատիկ են, որն ամեննին չի վկայում թույլ զարգացած հարկային համակարգի գոյության մասին:

Մեպագիր արձանագրությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ուրարտական պետությունում (մ. թ. ա. IX – մ. թ. ա. VII դդ.) հարկման գործընթացները ղեկավարվել են կարևորագույն պաշտոնյաների՝ փոխարքաների կամ մարզերի կառավարիչների կողմից: Դրանք ապահովել են ոչ միայն հարկերի գանձումը, այլ նաև դրանց դիմաց հավաքված բնամթերքի վերամշակումը:

Ուրարտական պետության հարկային համակարգն ընդգրկում էր արքայական տնտեսություններից վճարված, ինչպես նաև հպատակեցված երկրներից ու մարզերից բռնագանձված հարկերը: Եվ քանի որ գրավված տարածքներից գանձված հարկերը կրում էին ավելի համակարգված ու կայուն բնույթ, ուստի ուրարտացիների հաճախակի արշավանքների կազմակերպումը նպատակաուղղված էր առաջին հերթին պարտադրվող հարկերի գանձմանը: Բնականաբար, ուրարտական թագավորները ձեռնպահ էին մնում արշավանքների ժամանակ դաժան հաշվեհարդար տեսնելուց այն ցեղապետերի նկատմամբ, որոնք խոստանում էին կամավոր վճարել պարտադրված հարկերը:

Ինչպես հայտնի է, Աքեմենյան Պարսկաստանի, Սելևկյանների և ուրիշների կողմից Հայաստանի պարբերաբար հպատակեցումը և հելլենիստական ժամանակաշրջանում (մ. թ. ա. IV – մ. թ. II դարերում) հայ ժողովրդի պայքարը մակե-

³ Մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1962, Գ. Մ ա ր գ ս յ ա ն. Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1972 և այլն:

դոնյան ու հոռմեական զավթողական արշավանքների դեմ վերստին հանգեցրին նոր ծախսերի կատարմանը, հետագայում նաև՝ ոչ համակարգված հարկերի սահմանմանը: Ինչպես վկայում է հայ պատմագրությունը, հիշյալ ծախսերի կատարումն իրականացնելու համար պետությունը պետք է ունենար հզոր հարկային մեքենա, և ինչպես ցույց են տալիս հինարևելյան ու հելլենիստական մի շարք երկրների օրինակները, «պետության աչքից չի վրիպել հարկման որևէ քիչ թե շատ էական օբյեկտ»⁴: Հարկերը գյուղական համայնքներից ու քաղաքներից և հարկման ենթակա այլ օբյեկտներից հավաքվում էին տեղական ստրատեգների կողմից, այնուհետև դրանք ուղարկվում էին արքունի դիվանատուն կամ պետական գանձարան: Այս գանձարանում էր կուտակվում նաև պատերազմների միջոցով գրավված տարածքներից ստացված ավարը:

Նկատենք, որ տվյալ ժամանակաշրջանի հարկային համակարգին բնորոշ էր հետևյալ չորս հարկատեսակների գոյությունը՝ ա) բերքից գանձվող հարկեր (տուրքեր), որոնք վճարվում էին «Յարմտեաց երկրին և ի բերոյ ծառոցն պտղոց» և գանձվում էին իբրև «Յերրորդաց սերմանն» և «գհասարակաց այգւոյն և զճառոցն», բ) աշխատանքային պարհակների տեսքով հարկեր, որոնք վճարվում էին արքունի տան համար հարկադրական աշխատանքներ կատարելու միջոցով, մասնավորապես՝ «մարդահարկի», «պարհակի» և «խաշարի» ձևերով, գ) դրամական գանձումների տեսքով հարկեր, որոնք վճարվում էին աղահանքերից («բաժ աղտից») և ամուսնացողներից («տարազ պսակւաց»), դ) խառը գանձումների տեսքով կամ դրամով և բնատուրքով վճարվող հարկեր: Հողագործի եկամտի մեկ վեցերորդից մինչև մեկ երրորդ մասով գանձվում էին հողահարկը («տասկան») և գլխահարկը («քարգան»): Եթե հողահարկի հարկման օբյեկտ էր համարվում բերքը կամ պտուղը, և այն վճարվում էր ինչպես դրամով, այնպես էլ բնաթերքի տեսքով, ապա գլխահարկը վճարվում էր ձրի ֆիզիկական աշխատանք կատարելու միջոցով: Միաժամանակ գլխահարկի վճարումը գյուղացու կողմից իրականացվում էր նաև աշխատանքի համար իր անասունը տրամադրելու միջոցով, որը կոչվում էր «հարկ գրաստու»⁵:

Պետք է նկատել, որ Հին Հայաստանի հարկային համակարգի, մասնավորապես մ. թ. I-II դդ. տարեգրության կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ պետության առաջ գյուղական համայնքը հանդես էր գալիս որպես մեկ միասնական հարկային պարտատեր: Բնականաբար, համայնքում գանձվող հարկերն ու տուրքերը պետք է վճարվեին կոլեկտիվ կարգով:

Հաշվի առնելով այն, որ քննարկվող ժամանակաշրջանի հարկային համակարգի մասին տեղեկությունները շատ սահմանափակ են և նշանակալից չափով պայմանական բնույթ են կրում՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

ա) հարկերի ծագումն ուղղակիորեն կապված էր պետականության կայացման հետ, և դրանք իրենց ձևավորումն էին ստացել ապրանքային արտադրության ու պետական ապարատի ստեղծման միջոցով,

⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 682:

⁵ Նույն տեղում:

բ) հարկման ձևերը պայմանավորված էին պետության և հասարակության պահանջունքների բավարարման անհրաժեշտությամբ,

գ) հարկերը դիտվում էին ոչ համակարգված պարտադիր վճարներ, որոնք հիմնականում կրում էին բնաթերային ձև:

**Հարկային համակարգը ավատական (ֆեոդալական)
հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանում
(III – IX դդ.)**

Վաղ ավատական ժամանակաշրջանում հարկային հարաբերությունների զարգացումը զուգորդվել է Հայաստանի պետական ու քաղաքական այս կամ այն կացության հետ: Տվյալ ժամանակաշրջանում հարկային համակարգերի տարբերակումը դիտարկվում է երեք ժամանակահատվածներով՝ 1) հարկման գործընթացի ձևավորումն ու զարգացումը Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում (III–V դդ.), 2) Սասանյան Բրանի և բյուզանդական նվաճողների հարկային քաղաքականությունը Հայաստանում (V–VII դդ.), 3) Հայաստանի հարկային համակարգը արարական խալիֆայության տիրապետության ներքո (VII–IX դդ.):

Մեծ Հայքի թագավորության ողջ տարածքի գերագույն հողատերը համարվում էր թագավորը՝ Արշակունի գահակալը: Բ դեպ, III–IV դարերում արքունի տան հողատիրության կողքին ձևավորվեցին հողի մասնավոր սեփականատերեր: Այն ժամանակ, երբ կախյալ գյուղացին աշխատում էր հողի սեփականատիրոջ մոտ, նրա փոխարեն հարկերը վճարում էր հենց ինքը՝ սեփականատերը:

Հիշատակված ժամանակաշրջանում հարկերը և դրանց գանձման համակարգը նույնն էին, ինչ որ հարևան Սասանյան Բրանում և Հռոմեական կայսրության արևելյան նահանգներում: Մասնավորապես՝ իրենց մշտական կիրառումն ունեին հողային հարկը և գլխահարկը: Ընդ որում, հողային հարկը վճարում էին բնակչության բոլոր խավերը, մանր ու խոշոր հողատերերը, գյուղացի - հողագործները, իսկ գլխահարկը գանձվում էր շինականներից և քաղաքացիներից: Եթե հողային հարկի չափը պայմանավորված էր յուրաքանչյուր շրջանի հողերի բերրիության աստիճանով և վճարվում էր սովյալ տարվա բերքով՝ բերքի մեկ երրորդ, մեկ քառորդ կամ մեկ վեցերորդ չափով, ապա գլխահարկը վերցվում էր արական սեռի յուրաքանչյուր աշխատունակ շնչից 4 դրախտ (սասանյան արծաթե դրամ) տարվա երեք ամիսներին՝ հունվարին, մայիսին և դեկտեմբերին⁶: Բացի նշված հարկատեսակներից, գանձվում էին հարկային վճարին բնորոշ մի շարք պարհակներ, մասնավորապես՝ ա) զինվորական հարկը (բեկար), որի վճարումն իրականացվում էր զինվորական հետևակը համալրած գյուղացիների կողմից՝ բանակում կատարված աշխատանքի տեսքով, բ) տարապարհակ, այսինքն՝ շինականի կողմից անվճար ծառայության մատուցում պետական պաշտոնյաներին կամ զորամասերին, գ) ֆիզիկական աշխատանքի կատարում և դ) «մարդահարկ» - բանվորական ուժի հավաքագրում՝ համապետական նշանակության

⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1972, էջ 213-214:

շինարարական աշխատանքների՝ քաղաքների, կամուրջների, ջրանցքների, ճանապարհների կառուցման համար⁷: Ընդհանուր առմամբ՝ հարկման գործընթացը կազմակերպվում էր հազարապետի գործակալության միջոցով: Այն վարում էր «Հազարապետը Հայոց», որը ղեկավարում էր նաև տնտեսական հարկային վարչությունը: Գործակալությունն ուներ իր հարկահավաքները, որոնք գյուղական համայնքների ավագների կամ ղեկկանների միջոցով գյուղացիներից գանձում էին պետական հարկեր: Բացի այդ, հազարապետին էին ենթարկվում քաղաքների թագավորական տնտեսները՝ «շահապները», որոնք քաղաքներում պատասխանատու էին հարկահավաքման գործընթացի համար⁸:

Այնուհետև՝ V դարից մինչև VII դարը Հայաստանը հպատակվեց Մասանյան Երանին: Վերջինիս հպատակության ներքո՝ Հայաստանը մարզպանական կարգավիճակ ունեցող և արտոնյալ վիճակում գտնվող այն պետությունն էր, որտեղ պահպանվում էին հայ նախարարների ու բարձրագույն հոգևորականների ավանդական իրավունքներն ու արտոնությունները, հարկային համակարգը և այլն:

Մարզպանական Հայաստանում Մասանյանների հարկային նոր քաղաքականության իրականացման հիմքում դրվեց աշխարհագրի անցկացումը: Այսինքն՝ բոլոր ցանքատարածությունների, այգիների ու պարտեզների, անասնազրկաքանակի գրանցման միջոցով կանոնակարգվեցին հողահարկի գանձման օբյեկտները, հետագայում՝ ազգաբնակչության վիճակագրության կազմակերպումից հետո, հստակեցվեց նաև գլխահարկի հարկման բազան: Հարկային այդ բարեփոխումները դժգոհության ալիք բարձրացրին բնակչության բոլոր խավերի մեջ: Այդ վրդովմունքն ավելի խորացավ, երբ հարկահավաքները, բնատուրքից բացի, պահանջեցին նաև դրամական հարկեր: Եվ այդ հանգամանքը հանգեցրեց ոչ միայն սոցիալական լարվածության խորացմանը, այլև սովի ու համաճարակային երևույթների զանգվածայնությանը⁹:

Նյութական առումով, ավելի ծանր վիճակում էր Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող Հայաստանի տարածքի ազգաբնակչությունը: Եթե հարկային քաղաքականության իրականացման ժամանակ մի դեպքում հարկման միավոր էր համարվում մանր գյուղացիական հողատիրությունը, ապա մյուս դեպքում հարկերի վճարման ոլորտում գյուղական համայնքները գործում էին սահմանափակված համապարտ երաշխավորությամբ, այսինքն՝ համայնքը պարտավոր էր վճարել բոլոր հարկերը՝ անկախ հողերի մշակվածությունից կամ գյուղացիների՝ գյուղում բնակվելու հանգամանքից: Այս իմաստով համայնքը ձգտում էր մշակելու անգամ ամայացած հողերը, քանզի հարկային պարտավորությունն առաջադրվում էր բոլոր հողատեսքերի համար¹⁰:

⁷ Նույն տեղում:

⁸ Մանրամասն տե՛ս Ս. Հ ա կ ո բ յ ա ն. Հայ գյուղացիության պատմություն, հ. I, Երևան, 1957, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1962, Գ. Ս ա թ զ ո յ ա ն. նշվ. աշխ.:

⁹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 213-214:

¹⁰ Նույն տեղում:

Թերևս VI–VII դարերում հայ գյուղացու վիճակի մասին է վկայում Աղվենի ժողովի կանոնների չորրորդ (Դ) հոդվածը, ըստ որի՝ «Քահանային ժողովրդի կողմից հարկ տալու կարգը այսպես է լինելու. ունևորը (թուանիկը) պետք է տա չորս գրիվ ցորեն, վեց գրիվ գարի, տասնվեց «Քաս» քաղցու, իսկ նա, ով հացասակավ է, դրա կեսը պետք է տա. ինչ վերաբերում է գինուն, թող տա այնքան, որչափ կարող է: Վար ու ցանք և այգի չունեցողից չպետք է առնեն»¹¹:

Ինչպես հայտնի է, Սասանյան պետության և Բյուզանդական կայսրության նկատմամբ 630–640-ական թվականներին իրականացրած հաղթական արշավից հետո արաբները ներխուժեցին Հայաստան՝ հարկադրելով հայ ժողովրդին ճանաչել խալիֆայության գերիշխանությունը: Արաբական նվաճումները VII–IX դդ. միշտ նպատակաուղղված են եղել նվաճված ժողովուրդների հետ հպատակության պայմանագրերի կնքմանը, որոնցում գլխավոր պահանջը ջիզիանի (գլխահարկի) սահմանումն էր: Դա վերաբերել է նաև Հայաստանին:

VIII դարից սկսած՝ բոլորի համար որպես պարտադիր հարկատեսակ սահմանվեց նաև խարաջը (հողահարկը), որը գանձվում էր և(դրամական տեսքով, և(բնահարկի տեսքով: Բնահարկի չափերի մասին է վկայում այն տեղեկությունը, որ արաբները Հայաստանում «ամեն տնից 3 մոռ (մոտավորապես 2 փութ) մաղած ցորեն, մեկ ձիատուրակ, մեկ պարան և մեկ ձեռնոց» էին գանձում¹²:

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում հայ շինականի դրությունը առավելապես վատթարացնող հարկատեսակը գլխահարկն էր: Եվ պատահական չեն Ղևոնդ պատմիչի այն խոսքերը, թե խալիֆաներից Մահմեդն իր հետևորդներին կտակել էր «կերեք երկրի ընտրյալների միսը և խմեք հզորների արյունը», ուղղակի բնորոշում էր այդ ժամանակաշրջանի հարկային քաղաքականությունը¹³: Միաժամանակ, գլխահարկը գանձում էին չափահաս քրիստոնյաներից՝ այն պահանջելով նույնիսկ մեռածների համար, իսկ վճարողների պարանոցից կապարե կնիք էր կախվում: Գլխահարկը կրում էր միայն դրամական ձև և գանձվում էր մեկ քառորդ դինար արծաթե դրամի չափով (դիրհեմ): Հարկը պետք է վճարվեր տարին մեկ անգամ, և վճարողը պարտավոր էր անձամբ վճարել հարկահան պաշտոնյային:

Հողահարկի և գլխահարկի հետ մեկտեղ VIII դարում կիրառության մեջ դրվեց նաև մարդահարկը (խաշար, պարտադիր ձրի աշխատանք): Այն կարող էր գանձվել ինչպես պարենատուրքի, այնպես էլ արաբական կայսրության կերակրելու և զինվորներին օթևան տալու ձևով: Ամենասարսափելին այն էր, որ այդ ժամանակաշրջանում արաբ հարկահաններն անձամբ էին շրջում հայկական գավառներում և օրինական ու ապօրինի միջոցներով հարկի դիմաց կողոպտում հայ գյուղացուն:

¹¹ Տե՛ս Մ ռ վ ա տ և Վ ա դ ա ն կ ա տ վ ա գ ի. Պատմություն Աղվանից աշխարհի, աշխ. թարգմ. Վ. Առաքելյանի, Երևան, 1969, էջ 66:

¹² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 213–214:

¹³ Նույն տեղում, էջ 371–372:

Հարկերի աննախադեպ չափերի դեմ էին ուղղված նաև հայ ժողովրդի ազգային - ազատագրական շարժումները, որոնք IX դարում հանգեցրին օտար նվաճողների տիրապետության թոթափմանը:

Հարկային քաղաքականությունը Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում (IX – XI դդ.)

IX դարում անկախացած և ռազմաքաղաքական վերելքի ուղին բռնած Հայաստանի համար առանձնակի կարևորություն էին ստանում սեփական հարկային համակարգի սահմանումը և հարկային քաղաքականության իրականացումը:

Բագրատունիների թագավորության սկզբնական ժամանակաշրջանում սահմանվել էին երեք հարկատեսակներ՝ 1) հողատեր ավատատերերին (ֆեոդալներին) վճարվող «աշխարհական» հարկը, 2) պետությանը վճարվող «արքունական» հարկը և 3) եկեղեցուն ու հոգևորականությանը վճարվող հարկը: Ընդ որում, ճորտ և հողագուրկ գյուղացիությունը, բնակվելով աշխարհիկ հողատերերի և վանքերի սեփականությունը կազմող բնակավայրերում, կոռային աշխատանք էր կատարում հողատերերի սեփական տնտեսության մեջ: Բացի պետական և եկեղեցական հարկերի վճարումից, ազատ համայնական գյուղացիությունը կատարում էր նաև պետական աշխատանքային պարտավորություններ¹⁴:

Ի դեպ, հողատեր գյուղացիների համար գլխավոր հարկատեսակը հողահարկն էր: Այն գանձվում էր «հնգեկի» տեսքով, այսինքն՝ հողից ստացվող եկամտի մեկ հինգերորդ մասի չափով: Հնգեկը գանձվում էր ջրովի հողերից, իսկ անջրդի հողերից՝ եկամտի մեկ տասներորդի չափով: Մինչդեռ, այն գանձվում էր տարբեր ձևերով, մասնավորապես՝ շարիատի, խալայի և անասնահարկի տեսքով: Շարիատը գանձվում էր այգիների, հացացանքսի, բամբակի և այլ մշակաբույսերի, անասնակերի, մթերատու անասուններից ստացվող մթերքի նկատմամբ՝ եկամտի մեկ տասներորդի չափով: Խալան գանձվում էր խաղողի այգիներից և զինուց ստացված եկամտից: Իսկ անասնահարկը վճարվում էր յուղի կամ կաթի տեսքով: Ընդ որում, վիմագիր տարբեր արձանագրություններում և աղբյուրներում ևս հիշատակվում են անասնահարկի հարկման տարբեր օբյեկտներ ու չափեր: Բավականին մեծ չափերի էին հասնում նաև ազգաբնակչության կողմից վճարվող արքունական հարկերը, որոնց հիմնական տեսակներն էին զինվորական հարկը և աշխատանքային կամ պարհակային պարտավորությունները¹⁵: Զինվորական գլխավոր հարկատեսակը «չարն» էր, որը գանձում էին Բագրատունի և մյուս թագավորները, գահերեց և գահակալ իշխանները՝ հողից, ջրից, այգիներից ստացված եկամտի բոլոր աղբյուրներից: Ըստ հարկի

¹⁴ Աշխատանքային պարտավորության տեսակ էին դիտվում կոռը և բեկարը: Ընդ որում, եթե կոռը կատարվում էր հողատերերի օգտին, ապա բեկարը հանրային բնույթի պարտավորության տեսակ էր:

¹⁵ Հարկման իմաստով, «չար» հասկացության տակ նկատի է առնվել, ընդհանրապես՝ հարկը, տուրքը, հողահարկը, գլխահարկը, ռազմական ծախսերը հոգալու ու բանակը պահելու հարկը և այլն (մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1972, էջ 261):

նպատակաուղղվածության՝ զինվորական «չար» հարկատեսակը դասակարգվում էր. 1) «մեծ չարի» ու «փոքր չարի», որոնք ուղղվում էին ռազմական ծախսերի կատարմանը և բանակի պահպանմանը, 2) «բերդաչարի», որն ուղղվում էր բերդեր և ամրություններ կառուցելու կամ եղածները բարեկարգ պահպանելու համար, և 3) «գունդգահի», որը տրվում էր գորագնդի զինվորներին որպես դրամական հատուցում («հոռո») և բնակաբնակային վճար («թոշակ»)՝¹⁶:

Արքունական հաջորդ հարկատեսակներից էին «նեպակը», որը ճիճունների և միջատների դեմ պայքարելու պարտադիր աշխատանքային պարհակության կատարման կամ դրամական վճարման տեսակ էր համարվում, ինչպես նաև «թաստակը» կամ «պախտը», որը գանձվում էր Անի քաղաքից և արքունիքի ազդեցության ներքո գտնվող գյուղերից: Դրանց հետ մեկտեղ՝ առևտրականներից ու արհեստավորներից գանձվող արքունական հարկատեսակներից էր «բաժը», որը գանձվում էր ճանապարհների, կամուրջների վրա սայլերով կամ շալակով քաղաք տարվող մթերքների և վաճառվելիք կամ մորթվելիք անասունների դիմաց¹⁷:

Թվարկած հարկային պարտավորությունների կատարմանը զուգընթաց ազգաբնակչությունը վճարում էր գանազան տուրքեր քաղաքի այլ պաշտոնյաների՝ քաղաքապետի ու մուխթասիբի, իսկ գյուղական վայրերում նաև այսպես կոչված՝ «ձեռնավորների» օգտին:

Նկատենք, որ տվյալ ժամանակաշրջանի համար ծանր հարկատեսակներից էին եկեղեցական հարկերը, որոնցից գլխավորը «պտղին» էր: Այն վճարվում էր ամեն տեսակի բերքից ու եկամտից՝ ոչ պակաս մեկ տասներորդի չափով:

«Պտղի» գանձվում էր եկեղեցական թեմի մեջ մտնող բնակավայրերի բնակիչներից եկեղեցու քահանաների միջոցով, ընդ որում, հավաքած հարկը տրվում էր վանքերին կամ եպիսկոպոսական աթոռին (եպիսկոպոսական «հաս»), իսկ թեմերի ստացած հարկերը մասհանվում էին մետրոպոլիտին կամ հայրապետական աթոռին: Այն գյուղերում, որոնք գտնվում էին բարձր հոգևորականության ազդեցության ներքո, «պտղիից» բացի, գանձվում էին հարկեր վանքերի կամ բարձր հոգևորականության օգտին¹⁸:

Չնայած հայ ժողովրդի ճնշված վիճակին և հարկային ծանր բեռին, այնուամենայնիվ, օտար տիրապետությունից ազատագրված Հայաստանի տնտեսությունը IX – XI դարերում ունեցել է ընդհանուր վերելք և ապահովել արտադրողական ուժերի ավելի բարձր մակարդակ: Դա պայմանավորված է եղել սեփական հարկերի ձևավորմամբ և ինքնուրույն հարկային քաղաքականության իրականացմամբ:

¹⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 261:

¹⁷ Նույն տեղում, էջ 260-262:

¹⁸ Նույն տեղում:

Հարկերն ու հարկահանման ձևերը օտարերկրյա տիրապետության
ժամանակաշրջանում (XI դ. – XIX դարասկիզբ)

XI դ. սկսած՝ մեկը մյուսին հետևող քոչվորական ցեղերի ավերիչ արշավանքներն ու նրանց երկարատև տիրապետությունը, հայ ժողովրդի հսկայական զանգվածների հարկադրական արտագաղթերն ու օտար ցեղերի վերաբնակեցումը, հարյուր հազարավոր հայերի կոտորածը, կողոպուտն ու թալանը իրենց խորը և անջնջելի կնիքը թողեցին Հայաստանի և նրա հասարակական-տնտեսական կյանքի վրա: Ի դեպ, այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի համար ամենաահավոր ու դաժան տիրապետությունը կենսագործվում էր հարկահանության միջոցով: Այդ իմաստով առանձնահատուկ էր հարկերի ու հարկահանման ձևերի սահմանումը հատկապես Հայաստանում սելջուկյան թուրքերի, մոնղոլ-թաթարների և թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի տիրապետության ժամանակաշրջաններում:

Մոնղոլ-թաթարների տիրապետության ժամանակահատվածում (XIII-XIV դդ.) կիրառվում էր, այսպես կոչված, «ետրնթաց» հարկման սկզբունքը, որի էությունն այն էր, որ հարկերը մեծ մասամբ գանձվում էին ցածր եկամուտներ ունեցող գյուղացիներից: Եվ նման մեխանիզմը լայն հնարավորություններ էր ընձեռում մոնղոլ-թաթարների կամայականությունների ու չարաշահումների համար: Նկատենք, որ մոնղոլ նվաճողները Հայաստանում գանձում էին թվով 15–16 տեսակի հարկեր և տուրքեր: Հարկման էին ենթարկվում ինչպես մարդիկ, այնպես էլ անասունները, հողը, այգին, ջրաղացները, լճերը, հանքերը, առ ու ծախքի հանված ամեն տեսակի շարժական ու անշարժ ունեցվածքը¹⁹:

Նրանց կողմից «խարաջ», «մալ», այնուհետև «դալան» անվանումներով սահմանված հողային հարկը գանձվում էր հողամասերից և այգիներից՝ մթերքով կամ դրամով: Ընդ որում, այդ հարկի չափերը նույնիսկ գերազանցում էին ստացված բերքի 60–70 տոկոսը: Այս հարկի հետ լրացուցիչ գանձվում էր ջրի դիմաց հարկը, որը կոչվում էր «ավգան»²⁰:

Գլխահարկը Հայաստանում գանձվել է «դիչուր» անունով: Այդ հարկի հարկման բազան կազմում էին ինչպես մարդկանց, այնպես էլ անասունների գլխաքանակը: Այն գանձվել է արական սեռի 11–60 տարեկան բնակիչներից: Հարկի վճարումից ազատվում էին միայն կանայք և եկեղեցականները: Գլխահարկի չափը անորոշ և փոփոխական է եղել, որը հարկահավաքներին ընձեռել է չարաշահումների լայն հնարավորություն: Այս հարկատեսակի հետ մեկտեղ գանձվել է անասնահարկ, որը հաշվարկվել է ոչ միայն ըստ անասունների թվաքանակի, այլ նաև՝ անասնատեսակների²¹:

Հայաստանում բանակի պահպանման համար մոնղոլները գանձել են հատուկ հարկ, որը կոչվել է «թադար»: Դրա չափը կայուն ու որոշակի չի եղել: Նույնիսկ պատերազմների ժամանակ «թադարի» չափը քառապատկվել է: «Թադա-

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 261:

²¹ Տե՛ս շ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1954, էջ 277:

րը» բնահարկ էր, որը գանձվել է «յուրաքանչյուր գլխից 100 լիտր ցորեն, հիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ ու ծնծատ, երեք տոպրակ, երկու չվան, մի սպիտակ, մի նետ, մի նալ ու բացի դրանից, նաև այլ կաշառքներ և քսան անասունից՝ մի անասուն ու 20 սպիտակ, ով ոչինչ չուներ, պահանջվածի փոխարեն տղաներին ու աղջիկներին էին վերցնում»²²:

Մոնղոլական նվաճողների կողմից քրիստոնյա հպատակներից գանձվել է դավանանքի հարկ, որը սկզբում կոչվել է «խարաջ», իսկ հետագայում՝ «ջիգյա»: Այդ դարաշրջանում առանձին հարկատեսակներ գանձվել են մեկ միասնական «տզդու», իսկ քաղաքներում՝ «տամդա», հարկատեսակի միջոցով: Այն միավորվում էր «ուլուֆե» (սննդամթերք), «ալաֆե» (անասնակեր), «ուլադ» (փոստային ծառայության համար ձիեր), «նուզլ» (օթևան), «յամ» (փոստային կայան) և «սուսուն» (օրապահիկ հարկ) տարաբնույթ հարկային գանձույթները²³:

Թուրքմենների իշխանության ժամանակաշրջանում (XIV–XV դդ.) հարկային լուծը ավելի ծանր էր: Դա պայմանավորված էր ոչ միայն բազմաբովանդակ ու բազմազան հարկերի սահմանումով, այլ նաև «կրկնակի հարկապահանջության» քաղաքականությամբ: Մտահոգող էր հատկապես այն, որ տվյալ ժամանակաշրջանում հայ ժողովրդից գանձվում էին բազմաբնույթ հարկատեսակներ, մասնավորապես՝ 1) պետական ռենտա-հարկը, որը կոչվում էր «մալ». «մարջաթ», «բահրա», «բահրաչե», «խարաջ» և գանձվում էր բոլոր եկամտաբեր տնտեսություններից՝ եկամտի մեկ հինգերորդի չափով, եթե այն գտնվում էր պետական հողի վրա, և մեկ տասներորդի չափով՝ սեփականատիրական կալվածքում, 2) կալվածատիրական ռենտան, որը կոչվում էր «մուլք» կամ «մալիքանե» և գանձվում էր բերքի մեկ տասներորդի չափով, 3) գլխահարկը, որը կոչվում էր «ջիգյա» և գանձվում էր քրիստոնյա ու հրեա չափահաս արական հպատակներից: Ի դեպ, գլխահարկով հարկման համար որոշակի տարիք սահմանված չի եղել: Ընդ որում, հարկման ենթակա էին այն «պատանիները, որոնց վզի կրկնակի երկարությամբ չափով թելի ծայրերը՝ ատամներով բռնած ժամանակ, թելի օղակը չէր անցկացվում նրանց գլխով»²⁴: Բնականաբար, եթե թելի օղակն անցնում էր պատանու գլխով, ապա նա համարվում էր անչափահաս և հարկատու չէր: Գլխահարկն այն հարկատեսակներից էր, որի դրույքաչափը պարբերաբար բարձրացվում էր: XV դարի ընթացքում այն կրկնապատկվել էր, իսկ առանձին շրջաններում՝ եռապատկվել²⁵:

Բացի այս հարկատեսակներից, թուրքմեն նվաճողների առջև հայ ժողովուրդն ուներ տարաբնույթ հարկային այլ պարտավորություններ, օրինակ, «մավաշի»-«մարաի» (խոշոր և մանր եղջերավոր անասունների արոտավայրերից օգտվելու իրավունքի դիմաց), «թամշա» (արհեստանոցներից և ձկնորսարաններից գանձվող), «բուժ» (վաճառականներից գանձվող), «չերիք» (զինվորական ծառայությունից ազատված հպատակ-աշխարհագործից), «իխրաջաթ» (զինվորա-

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, էջ 276-278:

²⁴ Տե՛ս նաև ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 68-80:

²⁵ Նույն տեղում, 72-80:

կան և արտակարգ ծախսեր կատարելու համար), «շիզար ու բիզար» (բերդերի, ճանապարհների ու ջրանցքների շինարարության համար գանձվող) և այլ հարկերի տեսքով²⁶:

Թվարկված հարկատեսակներն իրենց իրավական ամրագրումն էին ստացել Ուզուն Հասանի իշխանության ժամանակ ընդունված օրինական հարկերի տեսակների, դրանց չափերի ու հարկահավաքման ձևերի մասին «Կանոն-նամե» կոչվող օրենքների գրքում²⁷: Այնուամենայնիվ, «կրկնակի հարկապահանջությունը» որպես բարձրաստիճան նվաճողների կամայականությունների ու չարաշահումների դրսևորումներ, իրենց բռնի ու դաժան հետևանքները թողեցին Հայաստանի տնտեսության վրա:

XVI–XVIII դդ. թուրքական և պարսկական տիրապետությունների ժամանակաշրջանում, Հայաստանում հարկերն ու տուրքերը գանձվում էին նահանգային և կենտրոնական հարկային մատյաններում նախապես գոյություն ունեցող տվյալների հիման վրա: Մասնավորապես, նման ցուցանիշներ էին համարվում տվյալ վայրերում կատարված շինարարական և ոռոգման աշխատանքներն ու բնակչության թվի աճը:

Հողի օգտագործման համար գանձվող հարկը հողային ռենտան էր, որը միաժամանակ կոչվում էր «բահրե» կամ «բահրաչե»: Այն գանձվում էր բնամթերքով և դասակարգվում՝ պետական կամ «բահրաչե-յե դիվանի» և կալվածատիրական կամ «բահրաչե-յե մալիքանե» հարկատեսակներով²⁸: Բնականաբար, հարկման աղբյուրի նման դասակարգումը պայմանավորված էր հողի պետական կամ հողատիրոջ սեփականության իրավունքով այն օգտագործելու հանգամանքով:

Միաժամանակ հարկային պարտավորությունների չկատարելու դեպքում սահմանվել էր պատասխանատվություն, որն ուղղակի կրում էր գյուղական համայնքը: Նախ՝ հարկման գործընթացը սկսվում էր գյուղում չափահաս, աշխատունակ տղամարդկանց հաշվառմամբ ու ցուցակագրմամբ, որից հետո հաշվարկվում էր գանձվող հարկերի հանրագումարը և արձանագրվում հարկային մատյաններում: Այնուհետև՝ յուրաքանչյուր գյուղի համար միանվագ սահմանվում էր գանձվող հարկի գումարը՝ դրամով արտահայտված: Ապա այդ ընդհանուր գումարի տակ նշվում էր, թե դրանից որքանն է կանխիկ դրամով հատուցվելու և որքանը՝ բնամթերքով²⁹: Բսկ հետագայում հարկերի այդ ընդհանուր գումարը բաշխվում էր առանձին տնտեսությունների վրա, որ կոչվում էր «թովջիհ»: Մակայն յուրաքանչյուր տնտեսության հարկային պարտավորությունների կատարման համար պատասխանատվությունը դրվում էր արդեն տվյալ գյուղի ամբողջ համայնքի վրա:

Բացի թվարկված հարկերից, ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի տարածքում օտար նվաճողների կողմից գանազան առիթներով սահմանվում էին այլ հարկատեսակներ, մասնավորապես՝ ա) «մալ» կամ «մալիյե»

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, էջ 267-274:

²⁹ Նույն տեղում, էջ 285-288:

հարկը, որը գանձվում էր եկամտաբեր բոլոր տեսակի սեփականատիրական գույքից (այգիներ, բանջարանոցներ և այլն), բ) «չոբանբեկի» հարկը, որը կանխիկ դրամով գանձվում էր մանր եղջերավոր անասունների դիմաց, գ) «ջիգյա» էր կոչվում այլակրոնության հարկը կամ գլխահարկը, որը գանձվում էր յուրաքանչյուր չափահաս քրիստոնյա տղամարդուց, դ) «բիգար»՝ պարտադիր աշխատանքային պարհակության կատարումն էր ռազմական նշանակության օբյեկտների կառուցման մասով, ե) «սուրսաթներ» էր կոչվում այն հարկը, որը դրվում էր բնակչության վրա ռազմական արշավանքների ժամանակ և, որը հատուցվում էր բացառապես հացահատիկով և այլ մթերքներով, զ) «խիդմաթանե» հարկը, որը գանձվում էր իբրև վարձատրություն այն ծառայության դիմաց, երբ հարկահանները գանազան առիթներով գալիս էին գյուղ և զբաղվում հարկերի ճշտման և գանձման գործերով, է) «փիշքաշ» հարկը, որը ազգաբնակչությունից գանձվում էր որոշակի նվերների տեսքով և այլ հարկեր³⁰։

Ընդ որում, հիշյալ հարկատեսակների թիվը երբեմն գերազանցել էր երեք տասնյակը։ Իսկ եթե դրանց ավելացվեն համայնքի ներսում գյուղական ավագների, քեդիսուդանների, մելիքների, ինչպես նաև եկեղեցու կողմից սահմանված հարկերն ու տուրքերը, ապա հարկերի ընդհանուր թվաքանակը գերազանցում էր հիսունը։ Այս հանգամանքը հանգեցրեց ոչ միայն հայ ժողովրդի կողոպուտին ու հարստահարմանը, այլև ուղղակի նրան մատնեց կատարյալ թշվառության։ Եվ պատահական չէ թուրք գրող Կոչիբեյի ուղերձը սուլթան Մուրադ IV-ին, որում ասված է. «...կարճ ասած, այդպիսի կեղեքումներ և հարստահարություններ դեռ չէին կատարվել ոչ մի երկրում, ոչ մի պետության մեջ... անհավատությունից աշխարհ չի կործանվի, այլ կանգուն կմնա իր տեղում, իսկ հալածանքներով՝ չի մնա»³¹։

Հարկային դաժան ճնշումների էին ենթարկվում Արևմտյան Հայաստանի հայերը Օսմանյան կայսրության տիրապետության ներքո։ Ընդ որում, հարկման գործընթացում մոտեցումները տարաբնույթ էին։ Այսպես՝ հարկեր սահմանվում էին մի կողմից շարիաթի, իսկ մյուս կողմից՝ սովորույթների վրա հիմնված։ Անհրաժեշտ է նկատել, որ սովյալ ժամանակաշրջանում կիրառվող հարկատեսակները նույնպես բազմաթիվ էին ու գերազանցում էին ութսունը, և դրանց հիմքում դարձյալ ընկած էին աշխատավճարային, բնավճարային ու դրամավճարային ձևերը։ Արևմտյան Հայաստանի բնակչության համար հատկապես ծանր հարկատեսակ էին գլխահարկը, «ուշրը» կամ «աշարը» (բնատուրքը), «խարաջը», որը գանձվում էր ոչ մահմեդական ազգաբնակչությունից, «բահրան» (հողային ռենտան), «ռեսմի բադ» (այգու հարկը), «ռեսմի բոստան» (բանջարանոցի հարկը), «ռեսմի արուս» (ամուսնության հարկը) և այլն³²։

³⁰ Մանրամասն տե՛ս Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1964, էջ 86-87, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 286-287 և այլն։

³¹ Տե՛ս Ս. Դ. Ս. Մ. և Ռ. Ո. Վ. Кочибей Гемюрджинский и другие османские писатели XVII в. о причинах упадка Турции. СПб., 1879, с. 249.

³² Տե՛ս Շ. Մ. և Ն. Մ. և Ղ. Ս. և Ն. նշվ. աշխ., էջ 276-278։

Ըստ էության, այս հարկերը հայ ժողովրդին հասցրին ծայրաստիճան աղքատության: Այս առումով թուրք պատմագիր Մ. Մելանիկին գրել է, որ «արտակարգ հարկերը հպատակ ժողովրդին հասցրին այն բանին, որ նրա համար զգվելի դարձավ այս աշխարհը և այն ամենը, ինչ գտնվում է այստեղ»³³:

Ազգային - ազատագրական շարժումները և հայոց պետականության վերականգնումը XV դարի կեսից մինչև XIX դարի սկիզբը դարձան անխուսափելի, և միաժամանակ դրանով ազգային գաղափարախոսության զարթոնքի սկիզբը դրվեց: Տվյալ ժամանակաշրջանում ազատագրման հեռանկարը Հայաստանի մտավորականությանը հուշում էր իր քաղաքական կողմնորոշումը թեքել դեպի Ռուսաստան. վերջինս այն միակ երկիրն էր, որն ի վիճակի էր օգնելու հայ ժողովրդի ազատագրման գործին:

Հարկման գործընթացի վիճակն ու զարգացումը
Երևանի նահանգում և Արևմտյան Հայաստանում
(XIX դ. – XX դարասկիզբ)

Հայ ազատագրական չորսհարյուրամյա պայքարի արդյունքում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև 1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքվեց Գյուլիստանի հաշտության պայմանագիրը, որով սկսվեց, իսկ Թուրքմենչայի՝ 1828 թ. փետրվարի 10-ի հաշտության պայմանագրով ավարտվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման գործընթացը: Ինչպես հայտնի է, 1828 թ. մարտի 21-ին Նիկոլայ Առաջինի հրամանագրով Հայաստանը հաստատվեց որպես Հայկական մարզ, այնուհետև՝ Երևանի նահանգ՝ Ռուսաստանի տիրապետության ներքո՝ իր բոլոր, այդ թվում հարկային քաղաքականության հետևանքներով: Տվյալ ժամանակաշրջանում հարկահավաքման գործառույթով օժտված էին ցարական կառավարության համապատասխան մարմինները, տեղական հողատերերը և կրոնական հաստատությունները:

Կառավարությունը գյուղացիներից գանձում էր պետական հարկեր (ծխահարկ, հողահարկ) և երկրային գանձույթ, ապա հարկադրում նրանց վճարել հասարակական հարկեր՝ գյուղի վարչական աշխատակազմի, ինչպես նաև քահանայի, գիշերային պահակի ու հանդապահի աշխատանքի համար: Պետական հարկերի հարկման հիմքում ընկած էր «հողի պտղաբերության» ցուցանիշը, որը հաշվարկվում էր հողի բերրիության վերաբերյալ միջինացված տվյալների հիման վրա: Մակայն այս հարկատեսակների զծով պարտավորությունների առաջադրման ժամանակ տրվում էին տարբերակված մոտեցումներ: Այսպես՝ XIX դ. 80-ական թվականների կեսերին Չանգեզուրի գավառում հողատերերը 17 դեպատին հողի համար վճարում էին 1 ռուբլի հողահարկ, իսկ գյուղացիները՝ 1 դեպատին հողի համար՝ մեկ ռուբլի 50 կոպեկ³⁴:

³³ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 287:

³⁴ Տե՛ս Ա. Հ ա մ բ ա ղ ա ն. Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 151, Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974, էջ 46-55, 86-93:

Գյուղացիների դրությունն էլ ավելի էր վատթարանում նաև հարկային համակարգի հաճախակի փոփոխությունների, այդ թվում գանձվող հարկերի դրույքաչափերի պարբերաբար բարձրացման պատճառով: Այսպես, օրինակ, 1871–1876 թթ. Երևանի նահանգում ծխահարկը 5 տուրլի 61 կոպեկից բարձրացվեց 6 տուրլի 47 կոպեկի կամ 1887 թ. Կարսի մարզում տասանորդը մարդահարկով փոխարինելու միջոցով գանձումների ծավալները 1884–1900 թթ. ընթացքում մեծացան 1,4 անգամ³⁵:

Երկրային գանձույթը՝ որպես տեղական հարկատեսակ, սահմանվեց և օրենքով ներդրվեց 1851 թվականից: Այն տեղական ինքնակառավարման մարմինների, ոստիկանության, դպրոցների, հիվանդանոցների պահպանման գլխավոր եկամտի աղբյուրն էր: Դա այն հավաքական հարկատեսակն էր, որի կառուցվածքում 70%-ը կազմում էր հողային հարկը, և մնացած 30%-ը ձևավորվում էր անշարժ գույքից ու արդյունագործական թույլտվության համար տրված փաստաթղթերի դիմաց վճարվող հարկային վճարներից³⁶:

XIX դարավերջին առանձնակի կարևորություն ստացան հատուկ հարկերի սահմանումը, մասնավորապես՝ ծխախոտի, սպիրտային խմիչքների, աղի, շաքարի, լուցկու, վառելիքի և այլ ապրանքների նկատմամբ կիրառվեցին ակցիզային հարկեր, իսկ բնակարանների, այգիների, բանջարանոցների, արհեստագործական ու առևտրական կրպակների և այլ անշարժ գույքի նկատմամբ՝ գույքահարկ: 1870 թ. մայիսի 14-ին ընդունված «Հարկերի սահմանման ու ներդրման մասին» կանոնադրության համաձայն՝ գյուղացիները սկսեցին իրենց մուլքադարներին, աղաներին, մելիքներին վճարել բահրա՝ գյուղատնտեսական մթերքների չորս երեսուներորդի չափով և դրամ՝ յուրաքանչյուր 360 քառ. սաժեն բանջարանոցի համար 80 կոպեկ, այգու համար՝ 1 տուրլի 20 կոպեկ: Նույն կանոնադրությամբ գյուղացիները բեզերին ու աղաներին լրացուցիչ պետք է վճարեին «մալջահաթ» հարկ՝ իրենց գյուղատնտեսական մթերքների մեկ երրորդի չափով և կոռ (տարվա ընթացքում 8 օր նրանց համար աշխատանք կատարելու միջոցով): Բացի նշված հարկային վճարումներից, հայ շինականը վճարում էր նաև բնավճար, դրամավճար և ռենտա: Եկեղեցական հաստատություններին վճարվող հարկատեսակներից էին՝ «մուլքը», որը գանձվում էր գյուղացիներից՝ գյուղատնտեսական մթերքների չորս երեսուներորդի չափով, «թիուլը», որը գանձվում էր մեկ տասներորդի չափով, և դրամական հարկը, որը գանձվում էր ամեն մի տնտեսությունից 4 տուրլի 25 կոպեկի չափով³⁷:

Չնայած այն հանգամանքին, որ 1893 թ. Երևանի նահանգում ծխահարկը փոխարինվեց անշարժ գույքի հարկով, այնուամենայնիվ, վերջինիս հետ դեռևս շարունակվում էին հարկադրվել բնակարանների, բանջարանոցների և այլնի նկատմամբ նախկինում սահմանված հատուկ գույքային հարկերը³⁸:

³⁵ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 33-40:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում, էջ 319-327:

³⁸ Նույն տեղում:

Հիշատակվածը վկայում է այն մասին, որ Հայաստանի տնտեսության զարգացման և մշակութային բարելավման նպատակներով հավաքագրված հարկերը ծախսվում էին ինքնակալության վարչական ու ոստիկանական ռեժիմի պահպանման և ժողովուրդների ազատագրական շարժումների ճնշման համար: Եվ դա բերում էր հայ ժողովրդի չափազանց ծանր կացությանը:

Առավել ծանր էր Արևմտյան Հայաստանի ժողովրդի վիճակը: Հայերը թուրքերի տիրապետության ներքո ենթարկվում էին հարկային հարստահարման և պարբերաբար գրկվում իրենց գույքից ու ունեցվածքից: Ըստ Գաֆֆու բնութագրմամբ՝ Արևմտյան Հայաստանում հարկային հարստահարությունը «հրեշավոր մի սպանություն է, որին ընդունակ է անգույթ, անողորմ թուրքը միայն: Մաշել ժողովուրդը աղքատությունով, տնտեսապես սնանկացնել նրան, գրկել ապրուստի բոլոր միջոցներից, ահա գլխավոր զենքը, որոնցով թուրքը աշխատում է ոչնչացնել հայ տարրը»³⁹:

Արևմտյան Հայաստանում գոյություն ունեին զանազան հարկատեսակներ, որոնք վճարում էին ինչպես հողատեր համարվող գյուղացիները, այնպես էլ հողագուրկ ճորտերը: Դրանք էին՝ աղաներին վճարվող հարկը, ավատական ռենտան, պետությանը վճարվող տասանորդը («աշար», «ուշար»), տարեկան հարկը («սայանե»), կալվածահարկը («էվլաք»), վաստակահարկ – եկամտահարկը («թեմեթու»), ոչխարի հարկը («աղնամ-րեսմի»), զինվորական հարկը («բեդելի-ասկերի») և այլն⁴⁰: Աղաների հարկը և ռենտան վճարվում էին բնավճարով ու դրամավճարով՝ գյուղացիների և ճորտերի կողմից ստացված եկամուտների ու բերքի դիմաց: Ընդ որում, պետությանը վճարվող տասանորդը գանձվում էր միայն հացահատիկով, իսկ կալվածահարկը վերցվում էր գյուղացիներից՝ անշարժ գույքի՝ հողամասի, կալի, տան և այլ կառույցների դիմաց: Վաստակահարկը կամ եկամտահարկը վճարվում էր առևտրականներից և արհեստագործներից՝ եկամտի 3-5 %-ի չափով: Ոչխարի հարկը գանձվում էր ոչխարների գլխաքանակից, իսկ զինվորական հարկը վճարում էին միայն քրիստոնյաները՝ զինվորական ծառայություն կատարելու փոխարեն:

Թուրքական իշխանությունները սահմանում էին բազմաթիվ այլ հարկատեսակներ այս կամ այն գործարքի համար: Օրինակ՝ հողը վաճառելիս վճարվում էր հարկ («ֆերադ»), հացահատիկ վաճառելիս՝ հացահատիկի հարկ («քիլե-փարասի»), հողը ժառանգությամբ ստանալիս՝ փոխանցման հարկ («ինթիհալ») և այլն: Ընդ որում, բոլոր հարկատեսակների չափերը պարբերաբար բարձրացվում էին, որի արդյունքում գյուղացին դառնում էր անվճարունակ և մինչև իր կյանքի վերջը ծառայում պարտատեր աղային:

Արևմտահայ գյուղացիությունը հարկային պարտավորություն ուներ նաև եկեղեցու առաջ: Հայոց վանքերն ու եկեղեցիները գանձում են եկեղեցական տուրքեր՝ «մուկաթաս» և «պտղի», պարտադրում էին գյուղացիներին կատարելու «գուրարա», այսինքն՝ աշխատել իրենց կալվածքներում և այլն:

³⁹ Տե՛ս Ըստ Գաֆֆու. Երկերի ժողովածու, հ. X, Երևան, 1991, էջ 266:

⁴⁰ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 320-325:

Արևմտյան Հայաստանում հարկահանությունն իրականացվում էր հարկադրանքի տարբեր մեթոդներով, երբեմն բռնագրավում էին գյուղացիների ամբողջ ունեցվածքը, անգամ ամենաանհրաժեշտը: «Հայկական նահանգներում հազիվ թե գտնվի գյուղ, որ չունենա իր ողբերգական պատմությունը, հազիվ թե գտնվի քրիստոնյա ընտանիք, որ չունենա սարսափելի հիշողություններ», – այսպես է արտահայտվել բելգիացի միջազգային իրավագետ Գյուստավ Ռոլեն Ժեկմենը թուրքական իշխանությունների կողմից իրականացվող հարկահանության մասին⁴¹:

Արդարացի են այն տեսակետները, ըստ որոնց՝ Արևմտյան Հայաստանում հարկահանությունը դիտվել է իբրև «հայաթափման գործոն», և որ հայ ժողովրդի հարստահարությունը կրում էր պետականորեն կազմակերպված բնույթ. նախ՝ պետությունն ինքն էր «թալանում» և ապա թույլ էր տալիս ու խրախուսում մահմեդական դավանանքին պատկանող խառնիճադանջ ամբոխին՝ անարգել կերպով թալանել, կողոպտել, իսկ դիմադրության դեպքում՝ կոտորել հայերին⁴²:

Այսպիսով՝ Հայաստանում հարկերը և հարկային հարաբերությունները՝ որպես մարդկության քաղաքակրթության արդյունք, դեռ վաղ ժամանակներից ծառայել են պետության և հասարակության պահանջումների բավարարմանը, ընդ որում, պետության ծագման պահից, հարկերն ուղղվել են պետական ապարատի պահպանման և պետության կենսագործունեության ապահովման գործառույթների իրագործմանը: Իսկ հետագա դարերի ընթացքում հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց հարկերի սահմանման ու ներդրման գործընթացներն ավելի կանոնավոր ու ծավալուն բնույթ կրեցին: Դա կարևոր նախապայման էր գործնականում ժամանակակից Հայաստանում գիտականորեն հիմնավորված ազգային հարկային օրենսդրություն մշակելու ուղղությամբ:

СИСТЕМА НАЛОГОВ АРМЕНИИ.
ПОЛИТИКО-ПРАВОВОЙ И ИСТОРИКО-ТЕОРЕТИЧЕСКИЙ ОЧЕРК
(С древних времен до 1918 г.)

ԱՇՈՏ ԽԱՇԱՏՐՅԱՆ

Р е з ю м е

В Армении налоги и налоговые отношения, начиная с древних времен, служили удовлетворению потребностей государства и общества. С момента возникновения государства налоги были направлены на сохранение государственного аппарата и осуществление жизнедеятельных функций государства. Процесс формирования налоговой системы и системы налогов в Армении можно условно

⁴¹ Տե՛ս Գյոստավ Րոլեն Զեյմեն. Армения, армяне и трактаты. М., 1896, с. 142.

⁴² Տե՛ս նաև Լ. Խաչատրյան. Եղեռնի դատապարտումը ԲաՖՖու երկերում, Երևան, 1999, էջ 35:

подразделить на следующие этапы: 1) возникновение налогов в древние времена (IX в. до н. э.); 2) налоговая система в условиях феодального общества (III–IX вв.); 3) налоговая политика в эпоху царствования Багратидов (IX–XI вв.); 4) налоги и формы их обложения в условиях иноземного владычества (XI в. – начало XIX в.); 5) состояние процесса налогообложения и его развития в Эриванской губернии и Западной Армении (XIX в. – начало XX в.); 6) налоговая система первой Республики Армения (1918–1920 гг.); 7) формирование и развитие налоговой системы Армении в советский период (1920 – 1991 гг.); 8) налоговая система третьей Республики Армения (1991 г. – до настоящего времени). В процессе развития общественных отношений налоги, установление налоговой системы и осуществление государством налоговой политики приобрели более регулируемый и научно обоснованный характер, что привело к разработке эффективного налогового законодательства в современной Армении.

THE SYSTEM OF TAXES IN ARMENIA.
A POLITICAL-LEGAL AND HISTORICAL-THEORETICAL ESSAY
(Since ancient times to 1918)

ASHOT KHACHATRYAN

S u m m a r y

The taxes and tax relations have served as satisfaction of requirements of the state and the society since ancient times in Armenia. Taxes have been directed to preservation of machinery of the state and to realization of the vital activity of state function since the moment of origin of the state. The process of formation of tax system and system of taxes can be subdivided in Armenia conditionally into the following stages: 1) occurrence of taxes during ancient times (the 9th century B.C.), 2) the tax system in the conditions of feudal society (the 3rd – the 9th centuries), 3) the tax policy in the epoch of the Bagratids' reign (the 9th – the 11th centuries), 4) taxes and forms of their taxation in the conditions of foreign dominion period (the 11th century – the beginning of the 19th century), 5) the condition of process of the taxation and its development in Erivan province and Western Armenia (the 19th century – the beginning of the 20th century), 6) the tax system of Armenia of the first Republic (1918–1920), 7) formation and development of tax system of Armenia in the Soviet period (1920–1991), 8) the tax system of Armenia of the third Republic (1991 – up to the present). In development of public relations the taxes, establishment of tax system and realization of tax policy by state have got more adjustable and scientifically proved character. It led to working out of effective tax legislation in modern Armenia.